ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ

2017 թ. հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Սիրիահայերի հիմնահարցեր. պատմություն և արդիականություն» խորագրով հանրապետական գիտաժողով, որը կազմակերպել էր ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժինը:

Բացման խոսքով հանդես եկավ Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանը*: ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ուղերձը ներկայացրեց Նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության պետ* Լևոն Անտոնյանը*: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս* Աշոտ Մելքոնյանը *և ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ.* Էդիկ Մինասյանը*:*

Գիտաժողովը բաղկացած էր երկու նիստից. առաջինը նվիրված էր սիրիահայության պատմական, իսկ երկրորդը՝ արդիականության հիմնահարցերին:

Բ. գ. դ., պրոֆ. Վերժինե Սվազլյանը *«Հայոց ցեղասպանությունից վերապրած սիրիահայերի նպաստը պատմական հիշողության վերականգնման գործում» զեկուցման մեջ ներկայացրեց ավելի քան 60 տարիների ընթացքում իր գրառած, ձայնագրած ու տեսագրած, ուսումնասիրած և հրատարակած ժողովրդական բանավոր ավանդության նյութերը, որոնք ամփոփված են շուրջ երեք տասնյակ մեծ ու փոքր գիտական աշխատությունների մեջ: Դրանցում տեղ են գտել ոչ միայն Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հայության գաղթը, այլև՝ Կիլիկիայի հայության բռնի տեղահանությունը դեպի սիրիական անապատներ, նրանց ջարդն ու կոտորածը, սփռվելը աշխարհի տարբեր երկրներ: Պ. գ. դ.* Հակոբ Չոլաքյանի *զեկուցման թեման էր՝ «Հայ դպրոցը Սիրիայի անկախացումից հետո»: Նա մասնավորապես անդրադարձավ 1945 թ. ապրիլի 17-ից՝ Սիրիայի անկախացումից հետո, երկու տասնամյակների ընթացքում հրամանագրերով և օրենքներով կարգավորված կրթության հետ կապված հարցերին:*

«Խոջայական-վաճառականական դասի դերը Հալեպի հայ գաղութի ազգային-հասարակական և մշակութային կյանքում 16–17-րդ դարերում» թեմայով ելույթ ունեցավ Վարդ Քեշիշյանը: *Նա շեշտեց, որ նշված դարերում Հալեպ քաղաքը Արևելքը Արևմուտքին կապող առևտրական կարևոր հանգուցակետ էր, որը միջազգային առևտրում գերիշխող դիրքեր գրաված հայ խոջաների ու վաճառականների ուշադրությունից չի վրիպել: Վերջիններս հայկական տարբեր բնակավայրերից, նաև այլ գաղթավայրերից Հալեպ գալով հետզհետե իրենց ձեռքում էին կենտրոնացնում երկրի ողջ առևտուրն ու դրանց վրա ազդելու լծակները: Այստեղ գործուն մասնակցություն էին ունենում ինչպես գաղութի ներքին կյանքում, այնպես էլ՝ համազգային նշանակության խնդիրների լուծման գործում:*

Միհրան Մինասյանը *«Արամ Անտոնյանը և Ցեղասպանության վավերագրության աշխատանքը Հալեպում 1918–1919 թթ.» վերնագրով զեկուցման մեջ ներկայացրեց ցեղասպանությունից փրկվելուց հետո Արամ Անտոնյանի կյանքն ու հատկապես նրա գործունեությունը՝ կապված ցեղասպանության վավերագրման աշխատանքի հետ: Նախ՝ Հալեպում, ապա Փարիզում հավաքչական աշխատանքով կարողացել է մեկտեղել փաստաթղթերի և վկայությունների եզակի հավաքածու, որը մեծ մասամբ ցարդ մնում է անտիպ:*

«Հայ կնոջ նկարագիրը օսմանյան Սիրիայում (16–19-րդ դդ.)» զեկուցման մեջ էլ Վեներա Մակարյանը, *հիմնվելով ժամանակի սակավաթիվ պատմական աղբյուրների, ճանապարհորդների հաղորդած կցկտուր տեղեկությունների և Շարիա դատարանների արձանագրությունների ուսումնասիրության վրա, ներկայացրեց օսմանյան կառավարման յուրահատուկ պայմաններում ապրող սիրիահայ կնոջ նկարագիրը:*

Հրազդան Թոքմաջյանը *«Հալեպահայ պղնձագործներ. Գալեմքյարյաններ» վերնագրով զեկուցման մեջ խոսեց հայ պղնձագործության ուշագրավ էջերից մեկի՝ Սիրիայի Հալեպ քաղաքում հաստատված հայ վարպետների մասին: Ըստ զեկուցողի՝ Սիրիայի տարածքում՝ Պալմիրայից Լաթաքիա և Ազազից Դամասկոս, հայ վարպետների գործունեության բազմաթիվ փաստեր կան, սակայն Հալեպն իր նշանակությամբ անհամեմատելի է եղել: Այդտեղ էին հաստատվել հայ վարպետների մեծ մասը, նրանցից էին Ավետիս և Հարություն Գալեմքյարյանները: Լավագույն վարպետների շարքում էին Այնթապի նշանավոր վարպետ Մելքոնի որդիները, ինչպես նաև՝ Անսրլյանները, Արեճյանները, Ավետիս Թոփչյանը, Նազար Լալեյանը, Կարապետ Խարմանջյանը, Հովհաննես Կրպիճյանը,*

Եղյա Կրպոյանը, Հարություն Ջինջավագյանը, Մարտիրոս Մաղաքյանը և ուրիշներ:

Պ. գ. թ. Գևորգ Յազըճյանը *«Սիրիայի հայկական գաղութը խորհրդային գաղտնի ծառայությունների փաստաթղթերում (1945–1991 թթ.)» վերնագրով զեկուցման մեջ ասաց, որ Սիրիահայության (մանավանդ հալեպահայության)՝ Սփյուռքի մայր գաղութ լինելը, համախումբ կենցաղը, ազգային ինքնության պահպանումը, սիրիահայության զգալի մասի մոտ հայրենաբաղձության ուժեղ զգացումներն ու Խորհրդային Միության նկատմամբ բարյացակամ դիրքորոշումները հավելյալ ազդակներ էին, որպեսզի խորհրդային գաղտնի ծառայությունները հատուկ զբաղվեին գաղութի մասին հնարավորինս մանրամասն տեղեկությունների հավաքումով, դրանց վերլուծումով և այդ ամենը պարբերաբար զեկուցագրերի, հաշվետվությունների ձևով ուղարկել են իրենց վերադասին՝ Մոսկվա:*

Քուվեյթի Ազգային վարժարանի տնօրեն Ներսես Սարգիսյանը *«Սիրիահայությունը և սիրիական պատերազմը» զեկուցման մեջ խոսեց Սիրիայի, մասնավորապես՝ Հալեպի հայության դերի և դիրքորոշման մասին սիրիական պատերազմի օրերին: Նա շեշտեց, որ համայնքն իր անձնական ճիգերով և օրը օրին տեղի ունեցող զարգացումների լույսի տակ բանաձևեց իր քաղաքական ուղղությունը, այն է՝*

սիրիահայությունը կառչած է մնալու Սիրիայի հողային և ժողովրդային ամբողջականությանը, սիրիահայությունը դեմ է բռնարարքներին, սիրիահայությունը դեմ է արտաքին ժխտողական միջամտություններին, սիրիահայությունը երկխոսության ճանապարհով է լուծելու խնդիրը, սիրիահայությունը Սիրիայի ժողովրդի անբաժան մասն է և պետք է ասելիք ունենա սահմանադրական փոփոխությունների հարցում:

Պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը *հանդես եկավ «Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժևորման առիթ» վերնագրով զեկուցումով: Նա շեշտեց, որ աշխարհաքաղաքական արդի մարտահրավերներն առավել քան երբեք առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժեքավորման, համայնքային կյանքը Սփյուռքում գաղափարագործնական առումով արմատապես վերանայելու և վերակազմակերպելու համար:*

Ք. գ. թ., դոցենտ Աբրահամ Գասպարյանը *«Սիրիա. ներքաղաքական հիմնախնդիրների ու աշխարհաքաղաքական մարտահրավերների միջակայքում» վերնագրով զեկուցման մեջ խոսեց Սիրիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների մասին, որոնք միշտ էլ*

պայմանավորված են եղել երկրի աշխարհաքաղաքական դիրքով, պատմամշակութային ներկայությամբ ու քաղաքական կշռով՝ անկախ քաղաքական վարչակարգից ու իշխող վարչակազմից: Նա շեշտեց, որ, մասնավորապես, Պարսից ծոցի երկրորդ պատերազմից հետո իշխող վարչակարգը խնդիր ուներ պահպանելու տարածաշրջանային կշիռն ու ազդեցությունը, չեզոքացնելու արտաքին քաղաքականության մեջ արտացոլված «սոցիալիստական ու հեղափոխական» գաղափարախոսությանն սպառնացող վտանգները:

«Պատերազմը Սիրիայում. մարդասիրական, բարեսիրական և այլ կազմակերպությունների օժանդակությունը սիրիահայությանը». այս թեմայով զեկուցեց պ. գ. թ. Անի Ֆիշենկճյանը*: Նա անդրադարձավ պատերազմի հետևանքով սիրիահայության տագնապալի առօրյային, թվարկեց այն բոլոր կազմակերպություններն ու բարեսիրական մարմինները, որոնք փութացին օգնել սիրիահայերին:*

Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ քննարկում և արդյունքների ամփոփում, որի ընթացքում Ա. Մելքոնյանը նշեց, որ հայ Սփյուռքին վերաբերող հիմնահարցերն առավել ակտիվությամբ պետք է արծարծվեն՝ շեշտելով հայրենիքի հզորացման հարցում գործնական քայլեր ձեռնարկելու կարևորությունը:

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃՅԱՆ